

## ԶԱՐՉԱՐԱՆՔ ԵՒ ԽԱԶ

Խաչուիլ՝ ուրիշներուն համար եւ կամաւ կոչում է մեծ: Խաչուիլ իր խոկ մեղթերեւն համար եւ ակամայ՝ պատի՛ծ է արձանի, բայց զրութեան կառօք . . . :

\* \* \*

Խաչեր կան եւ առաջ խաչեր՝ նուան կիրքի, նախանձի եւ ասելութեան. Խաչեր աւազակի՝ զոր պէտ չէ՛ երբեք օփորի Յիսուսի խաչին նետ.

Հոգի՛, տոռամը ողբերգական, որուն ներկայ պիտի ըլլաս Աւազ Հինգչարթի զիշեր, պատմել զանց կ'ընեմ, զի ան ո՛չ միայն տիսո՞ւր է և որուն չես կրնար ունեկնդրել առանց արցունքի, այլ արդէն ականատես պիտի ըլլաս անոր տեսակ մը ներկայացման. պիտի լսես նախ աղեխսարշ պատմութիւնները Յիսուսի տենդոս հալածանքին, աւազակաբարոյ ձերբակալութեան, քահանաներու, զպիրներու և երեցներու ձրի ամբաստանութեան և անիշտա գատաստանին, ժողովուրդին՝ որ զեռերէկ ոսվասննա՞ն կը պոռար Անոր, այսօրուան սի խաչ հանո աղաղակներուն, ոմանց նոյնիսկ թուքին ու մուրին, ոմանց սուտ վկայութիւններուն, այլոց անազորոյն ծեծին ու չարչարանքին. պիտի լսես Յիսուսին արհամարհոս լուսութիւնը կամ Անոր կարուկ բայց հատու պատասխանները զաւտարուներուն, և հուսկ ուրեմն պիտի տեսնես Յիսուսի տառապանքները և խաչելութիւնը. Եւ այս բոլորը ընդելուզուած՝ ողբաձայն ալէլուներու, սազմոսերգութեանց, թրթուն և գողգոջուն աւետարանական ընթերցութիւններուն, թաւ ու թափնառ շարականներուն և ապա՝ հոծ խաւարին մէջ մերթ զոռ և մերթ մեղմանոյչ ձայնին քառողջին, զոր ժողովուրդը կը լսէ երբեմն և երբեմն հեկեկածայն:

Այս՝ Հոգի՛, այս բոլորին հանգիսամս ըլլալ, լսել այս բոլորը երգուած աղեկուուր ձայնով, բաժնել համակրօրին Յիսուսին անհո՞ւն զիշտը, չարչարանքն ու տառապանքը և վկան ըլլալ իր ժահուան,

ո՛չ, անհանգութելի՛ և անկրելի՛ է հաւատացեալին համար . . . :

— Բայց ի՞նչ եղար, Հոգի՛. ի՞նչո՞ւ երեսոգ այդպէս կը ծածկես ու կուլաս հեկեկալէն . . . Զէ՞ որ այլևս չուզեցի քեզ տեսնել այդպէս յուզուած և վրդովուած, մանաւանդ արցունքոտ աչքերով . . . և անոր համար չէ՞ որ մանրամասնորէն այսօր չուզեցի պատմել վերջին օրերը Յիսուսին:

Երէ՛ցս, իրաւունք ունիք, չա՛տ իրաւունք՝ երբ ինձ կը յիշեցնէք աւետիսս և ուխս, բայց անոնք ուրիշ եւ կեանքը ուրիշ է, երբ իրազութիւնը բացառիկ է և վեր մարգային կարողութիւնէն . . . Երբ ինձ կը յիշեցնէք ուխտոս, ինչո՞ւ չէք խորհիր թէ մարդ եմ ամէն բանէ առաջ և մի՛ս ու ջիզե՞ր ունիմ: Այս՝ Երէ՛ցս, մարդ եմ և տկար արարած, չեմ կրնար և չկրցայ հանգուրժել հրեշտային վարմութին մարդոց՝ հանդէպ անմեղին, միակ Բարիին և մեր Բարերարին որ Յիսուսն է, որ Յիսուսը եղաւ, որուն զեռ քանի մը օր առաջ թագաւորական փառաքը կ'երգէին և այսօր զիշտանք անհերքելիօրէն որ մեր փրկութեան համար մարդացած սէր-Աստուածն իսկ է որ այսպէս կը խաչին մարգիկ . . .

Քեզի չլսած, Երէ՛ցս, օրե՞ր առաջ սկսած եմ արդէն ապրիլ վիշտն ու տառապանքը, չարչարանքն ու խաչը և մանը՝ պաշտելի Վարդապետին, զոր ա՛յնքան խորհանչցուցիք և ա՛յնքան անհուն սիրցուցիք ինձ՝ ձեր բացատրութիւններով . . . Բուէ՛ք, Երէ՛ցս, ինչպէս չլսմ ա՛յնքան հրեշտային անգթութեամբ և անիրաւ կերպով խոշտանգուած, խաչուած և մեռած Աստուծոյ Որգույն անդարմանելի կորուստը:

— Կորո՞ւս. ո՛չ Հոգի՛, այլ իր բառերով՝ կեանք յաւիտենական . . .

— Կորուսում՝ թո՞ղ ըլլայ մեզ համար, Երէ՛ցս, քանի որ մեր աչքերը պիտի չտեսնեն վաղը զինք, և պիտմ լսեն միայն իր մատնութիւնը և երեսուն արծաթի վաճառումը աշակերտին կողմէ, պիտի լսեն պատմութիւնը իր անարգուելուն, չարչարուելուն, չարչարուելուն, թուքին ու մուրին՝ իր օրհնեալ երեսներուն, իր պաշտելի զլիսուն իշած ան-

գութ հարուածներուն, ինչպէս ըսկինք՝ պատմութիւնը վերջապէս իր խաչին և մանուան . . . Եւ զարմանալին ու դայթակղելին՝ պատմութիւնը՝ իր բոլոր աշակերտներուն վատոցի փախստեան ու խաչին վրայ բեկոռւած՝ իր սուրբ չըթունքներէն արտասանած ներումի խօսքերուն, և խօսքերուն՝ ո՞հ, իրեն հետ խաչուած, բայց զղջացող աւազակին և զինք դառնորէն հեղունո՞ղ, չարչարո՞ղ և խաչող զինուորներուն ուղղուած . . . Եւ, երէց ց, հուսկ ուրեմն պիտի լոեմ պատմութիւնը իր օգնութիւն աղազակող կանչերուն և պարապ երկնքին անկարեկի՞ր լուսթիւնը: Բոէք, երէց ց, ի լուր ձեր բեկրեկ ձայնին և ի յուշ այս բոլորին, ինչպէս մեամ լուսու, անկարեկի՞ր և անյոյյզ, մարմարէ պազ և անշարժ արձանի մը պէս . . . Աա, երէց ց, պա՞րզ, հէքեաթունա՞կ և ուեէ մէկու մը պատմութիւնը չէ, այլ մեր Փրկչին, մեր Բարերարին կեանքն է և մե՛ր իսկ կեանքին պամուրիւնը, իրական և ճակատազրական, զոր այժմէն, ի յառաջազունէ պատապարտուած ենք լսել և ապրիւ . . .

— Բայց, Հոգի՛, երանի չհ՞ս տար այդպէս չարչարուած, տառապած, խոշտանգուած, ջախջախ ու խաչուած հոգւոյն որ կնիքը ունի կոչումին և մեռած, ու թաղուելէ զերջ, երրորդ օրը պիտի իրապէս թաւալէ զինք գերեզմանող փոսին ժայռը և յարուրիւն առած՝ հոնկէ դուրս պիտի գայ աւելի պերճ, լուսաւոր ու թեթե, պիտի թեք առնէ յաղթական և զիրագատած իր աստաւածութիւնը, համբանալէ առաջ երամին, քառասուն օրեր պիտի թեածէ հոս հոն, իրք ողի, մերթ երևալով իր սիրելիներուն — Մազգագենացիին, աշակերտներէն ոմանց, աշակերտներու ողջ երամին, պիտի խօսի և պիտի գործէ հրմանութելու համար իրենց երերուն հաւատաքը, ամենուն ներշնչելով հաւատեն ու յոյը յարուրեան:

Ո՞չ, Հոգի՛, եթէ հաւատը ունիս այս իրողութիւններուն, պարտականութիւնը պիտի ըլլայ երթալ եկեղեցին, լսել, հոգ չէ՝ յուզուած և լալով՝ Յիսուսի զերջին օրերու ողբերգական պատմութիւնը և խորհիլ . . . խորհիլ՝ մարդուն անխօրաչափելի տղիտութեան, իր տղէտ ողիին անսահման անիրաւութեան, իր հրէշային անզիթութեան, իր տիսեղ նկարազրին յաւիտեական չա-

րութեան, իր չահամու հստափրութեան, թափուած արիւնին ի զուր աղքահրահոսութիւն. մէկ խօսքով՝ Աշխարհի թագւորութեան զեռ ամբահմեթիւնութեան վրայ, և զուր գալ եկեղեցիէն կլանուած արի խորհուրդով, բայց նաև թե առած լոյս յարութեան, որ պէտք է արշալուն զէմ, քիզ վրայ, ճառագայթելու համար իրեն իրականութեան անխառն ժամին՝ հոգից ու կեանքէդ ներսու: Այս, Հոգի՛, սրբէ աշքերդ և պաղարին մարդու կարենա զիտուրդ իւրի մարդկային փրկագործութեան առամին որ խորհուրդը եղաւ նաև հօմարի կեանքին: \*

Այս՝ Հոգի՛, զիտեմ, բոլորովին խելամուտ պիտի չըլլայ խորհուրդին ներքին և ամբողջական իմաստին, բայց պիտի զմայինոր վրայ և պիտի ապրի՛ զայն՝ զարմանալով . . .

Եւ յիտոյ, Հոգի՛, չըլլի՛ որ այլես զիտակից և փորձառու եղար, քաջ պիտի զբանուիս ոչ միայն Յիսուսուին՝ այլ քու աննական խաչիդէպ. որովհետեւ ալ զիտակ ես թէ կեանքը ամբողջ, մանաւանդ թնժեալներուն կեանքը խաչ է եւ ման . . . Այդէ տիեզերական օրենքը, այդէ համաւարաքիրը ամեննջելի ճակատազրիը ամենուն: Հոէ՛, Հոգի՛, չկա՞յ հակասութիւն այդ յարարուրեանդ և այս սկարուրեանդ մինչ ի՞լում՝ միջներ աւեսիսիդ որով խանգավառեցիր զիս՝ և այսօրուան յուսահատութեանդ . . .

\* \*

Եւ տակաւին: Աա, Հոգի՛, պատմութիւնն է միայն՝ երկու հազար տարիներ առաջ ապրուած կեանքի մը, թող ըլլայ այլ կեանքը մեզ համար մարդացած Աստուծոյ, և այդ՝ այսօր քու կողմէդ զգացուած օրը տով և տեսնուած երեակայութեամբ: Հապա եթէ զուն ի՞նքդ ըլլայիր մատնուածը անիրաւուածը, չարչարուածը, խաչուածը և մեաննելիքը, ամենքէն լքուածը և անյօյը և անյօյը յարութեան և անմահութեան. այդ անյօյը և անլոյյս պարագային, լսէ՛, Հոգի՛, ի՞նչ պիտի ընէիք . . . Ո՞չ, Հոգի՛, լսէ արտում՝ բայց ոչ անյօյը

խաչին և մահուան պատմութիւնը և ի յուշ  
իր բազմական յարութեան, ըսէ՛ աներկե-  
ւան հաւատքով . — «Յիսուս պէտք էր  
խաչուեր, բազուեր և յարութիւն առնէր՝  
որպէսզի մենք ամենքնիս առ ուժը ունե-  
նայինք օր մը խաչուելու, մեռնելու և բաղ-  
ուելու ուրիշին համար, եւ յոյը ունենա-  
յին յարութեան և անմահութեան . . . .

\* \*

— Ի՞նչ ըսեմ . . . իրաւունք ունիք, .  
Երէ՛ցա: Բայց սա լա՛ւ զիտցէք . — թէ և  
այս վայրկեանին չա՛տ խոռոշած, չա՛տ այ-  
լայլած և ինքզինքէս դուրս, սակայն տէր  
եմ և անք պիտի մնամ խոսումիս: Այս՛,  
Երէ՛ցա, քաջ պիտի մնամ և պիտի հան-  
գուրժեմ ո՛չ միայն պաշտելի Վարդապե-  
տիս փրկագործութեան տուամին պատմու-  
թեան, այլ պիտի քաջ մնամ զիմացը կո-  
չումիս, զիմացը անձնական խաչիս . . .  
Այս՛, Երէ՛ցա, քաջ պիտի ըլլամ: Ինչո՞ւ  
ուսւախումիմ, թերես պիտի լամ, որովհետեւ  
զուս հոգի չեմ, միս, արիւն և ջիղ եմ,  
կը զգամ ցաւ ու տառապանք, բայց պիտի  
լամ մանաւանդ սրսով, որովհետեւ կոչու-  
մի, զիտակցութեան տէր եմ, զիտեմ թէ  
անձեղ եմ, անձնուրաց եմ և զիտեմ նաև  
որ զի խաչելիի աշխարհը չար, անիրաւ,  
նախանձու, չահամու և եսամու է . . . . Եւ  
Երէ՛ցա, մի մոռնաք որ Աստուածորդին իսկ  
ըստ . — «Հոգիս յօժար է, բայց մարմինս  
տկար»:

Այս՛, Երէ՛ցա, մարմինս եկար է. և զի-  
տեմ ամէն դաւաճանութիւն անկէ է որ  
պիտի զայ, բայց վստահ եմ հոգիիս քա-  
չութեան վրայ. ան պիտի յազթանակէ  
հուսկ ուրեմն, որովհետեւ պիտի զոհուի ճշշ-  
մարտութեան համար և պիտի մնայ անմահ: Միայն թէ Երէ՛ցա, իմ անձնական պարտա-  
կանութեանն հաւատարմութիւնը ծառայէ՛ր  
մանաւանդ արդարենքու կիանքին, որը զըժ-  
րախտարար է և կը մնայ նոյնը, միշտ հա-  
լածուած ու խաչուած սվասն արդարու-  
թեանն, այսօր ալ՝ ինչպէս էր Երէկ է . . . .

— Սա աւելի՛ պատճառ մըն է, Հոգի՛,  
որ զու ստոյիկեանի մը պէս քաջ և անայ-  
լայլ մնայ սկզբունքներուդ առջն, ինչ որ  
ալ պատճի քեզ, տանիս լուս և համբե-  
րութեամբ, առանց արտունջի և տկարու-  
թեան, քանի որ ան պատմութիւնն է բոլոր

արդարներուն, պատմութիւնը բուն իսկ  
կիանքին. այս՛, Հոգի՛, խաչերը միշտ ալն-  
կուած են. նայէ՛ որ քուկինդ ըլլայ խաչը  
արդարին, խաչը ընտրեալին, խաչը Յի-  
սուսին, որուն պիտի վիճակին ճակատագո-  
կանօրէն յարութիւն, յարութիւն և անմա-  
հութիւն . . . .

## Ինչո՞ւ լուեցիք:

— Կ'ամչնամ պատասխաննելու . . . .  
— Զլլամո՞յ գարձեալ այլայիցաւ միտ-  
քըդ և կը զախնաս զալիքէն, և պիտի ըն-  
կրկիս ուխտիդ կատարումէն:

— Ալլայլամ՛ այս՛, բայց ընկրկում  
ոչ, Երէ՛ցա: Այլայիցայ՝ որովհետեւ զըժ-  
ուա՞ր է, չատ զժուար գալիքը զիմակալել :

Բայց Երէ՛ցա, միշտ քաջ եմ և հաւա-  
տարիմ ուխտիս. սիրով պիտի խմեմ ինձ  
երկարող բաժակը կոչումին և պիտի չըրա-  
ծարիմ. միայն թէ ներեցէ՛ք տկարացում-  
ներուս . . . : Ներեցէ՛ք, Երէ՛ցա, և ըսէ՛ք,  
խոսեցէ՛ք ինձ որ աւելի՛ սրտապնդուիմ և  
միտիթարուիմ:

— Ներել՝ իմ պարտականութիւնս է,  
Հոգի՛, բայց ներել՝ ինչ բանի՞ համար,  
ներել՝ քու ո՞ր մեղքդ: Կալով նոր և քա-  
ջալերիչ խօսքին, ըսէ՛, Հոգի՛, ինչի՞ կը  
սպասես արգեօք:

— Հոգի՛, ինչպէս քանիցս ըստած եմ,  
անսնց մասուն չկայ զիտական և չօշափելի  
փաստ, ինչ որ յամառօրէն և անիրաւ կեր-  
պով կը պահանջեն բանապաշտ և զիտա-  
կան մարդիկ և ինչ որ գուն կը պահանջես  
այժմ տեսակ մը չուարած . . . : Բայց կայ  
նախ սիեզերական նաւակը մարդոց, ո՞ւր  
ու անսնք գտնուին և ի՞նչ կրօնք ալ դա-  
ւանին: Երկրորդ՝ կա՛ն Յիսուսին տուած  
փաստերը, տրուած իր աշակերտներուն և  
հաւատացեալներուն: Այդ փաստերը նի-  
մենին են մեր կրօնքին և անոր դաւանան-  
քին, զորս ըսիր թէ կ'ընդունիս և կը սի-  
րես: Մարդ ի՞րապէս Քիսոնեալ է՝ այդ  
դաւանանքներով և չէ՛ Քիսոնեալ առանց  
անսնց, այլ է իմաստակ'ր մը միայն. ի-  
մաստասէր՝ միշտ որոնող և միշտ կասկա-  
ծուած. հաւատացող՝ այսպէս կամ այնպէս.  
տէր՝ զանազան զրութեանց, հոգեպաշտ  
կամ նիւթապաշտ, և կամ պարզ անհա-  
ւատ . . . : Հոգի՛, կը խորհիմ թէ մարդուն

համար աւելի լուս է առ այժմ առեղծուածային, անձանօթին — որ մենք Աստուած կը կոչենք — կրօնական, մանաւանդ քրիստոնէական լուծումով և անոր ճշմարիս լուսաւոր և ազնուական հաւատքովը զոհանալ — հաւատք՝ որ հիմնուած է զգացական և փորձառական փաստերու վրայ — և անով զօրանալ, միսիթարուիլ, ապրիլ ու գործել, քան թէ կասկածիլ, աննպատակ որոնել և գործել, օրօրուիլ և մնալ անմխիթար՝ կեանքի մէկը միւսէն ծանր զիմայիկութեանց առջեւ Այնպէս չէ<sup>9</sup>, Հոգի՛ Այս՝ Հոգի՛, մենք, քրիստոնեայ երցներս և անկեղծ հաւատացեալներ, աւելի՛ կարևորութիւն կ'ընծայենք հոգիով զգացուած ճշմարտութիւններու, որոնք աւելի առողջ, ուղիղ և ազնուական են և աւելի յգի՝ զործնական գեղեցիկ և օգտաշատ արդիւնքներով, և ապրիլու յարաբերական օրինակելի կեանքով մը՝ անոնց թելագրութիւններուն, մանաւանդ Աւետարանի բարձր բարյականներն համեմատ, քան թէ զիտական և աւելի շօշափելի նկատուած ճշմարտութիւններուն, որոնք զբժրախտաբար կամ զործ չունին հոգիին և հոգիկանին հետ — և մարդ հոգիով միայն կ'ապրի — հետեարար կը մնան լուռ՝ կարեր և կենսական խորհուրդներու մասին, կը մնան պալ՝ հանգէպ բարյականներն, ուստի կ'ապրին կեանք մը ընդհանրապէս անարդ, զուհիկ, ստորին, անբարոյ կամ ապարարոյ, և կամ մարդը կը թողուն առանձին ինքինքին հիս, թուլ, տկա՞ր, անմխիթա՞ր և արժանի զթութեան և լոցի:

\* \*

Հոգի՛, ունիս և ունեցիր հետզետէ ամաւր, լայն ու պայծառ նաւասք. զիտցի՛ր՝ սա անզերազանցելի այն զօրութիւնն է որով մեր նովին ինքզինք կը զգայ մի՛ Քրիստոսի հոգւոյն հետ, և կ'ապրի լրիւ անոր կեանքը իր բոլոր պարաւականութիւններով սիրոյ, նուիրումի, զութի, հրաշքի, զոհուզութեան, քաջութեան, խաչի և մահու և ապա յարութեան և անմահութեան . . . Նման հրաշալի զօրութեան մը զգացումը միայն կը զօրէ հրաժարիլ ստորին կիրքերէն և ախորժակներէն, անաւանական բերումներէն և ապրումներէն, և յայտնութեամբը, զարգացումովը թաքուն, առողջ,

գեղեցիկ, անհուն և բազմաշնորհ ուժեւուն, կը միացնէ զայն Քրիստոսի ողիին, և կ'ընծայէ զինք մարդ տիպար՝ զործելու համար զործեր աստուածային . . .

Դուն, Հոգի՛, այսօր թէս տկար և ազգուն, բայց զստահ եմ՝ տէր ես այդ գորութեան: Աւստի կը յորդորիմ քեզ ամբապնդելու և ճախացնելու զայն, ըլլալու համար միշտ աննկուն: Մի՛ զախնար, Հոգի՛, խորհէ միշտ բարին ու ճշմարիտը և ինչ որ ալ պատահի կեանքիզ մէջ, նոյնիսկ խաչ և ման՝ ապրի՛ր զանոնք քաջարար . . . Մի՛ զախնար մանաւանդ երր կոչումիլի խաչին վրայ մնաս առանձինն, առանց օգնութեան խօսքի և ձայնի. զստահ եղիր, Հոգի՛, թէս Աստուած միշտ երկինքին չիլներ օգնութեան գալու համար խաչումին, բայց չիլքեր զանոնք որ անկեղծօրէն կը հաւատան իրեն և կ'ապրին իրենց մարդկային կոչումը. զայդ պիտի տեսնեն երր առնեն լարութիւն և ապրին կեանքը անմահութեան . . .

Աւստի, Հոգի՛, կոչ կ'ուզզեմ քեզ երթալ եկեղեցի և կատարել հաւատացեալի բոլոր պարտականութիւններոց քաջարար: Մնացի՛ր անվեհեր ու քաջ զիմացը խաչին որ կեանքն իսկ է արդարներուն: Այս՝ Հոգի՛, զնա եկեղեցի անխափան, լու՛ և ներշնչուիր, լու՛ և սիրտ առ պատմութենէն Յիսուսի ողբերգական զախնանէն, լու՛ զանոնք իրրե դաս՝ որ կ'աւանդէ Յիսուս բեմէն իր արիւնութ խաչուրդներուն, ըլլան անոնք զատօրէն փախչող աշակերտներ — որոնց ոէրը սակայն կը զգայ իր հոգին — թէ իր եկեղեցւոյ բոլոր հայրերն ու հաւատացեալները: Հաւատքս մեծ է, Հոգի՛, քու մասիդ, եթէ չես իսկ՝ պիտի ըլլաս օր մը ճշմարիտ քրիստոնեայ, խոկապէս փրկուած և փրկուած մարդը հօմարիս . . . :

ՀԱՅԿԱԶՈՒԻՆ Ա. ՔՀՅ. ԱՍԿԵՐԻՉԵԼՆ

